

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

սլետական համալսարան» ՊՈԱԿ-ի

ռեկտորի 29.04.2016 թ. թիվ 269 Լ/Կ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 4 28.04.2016թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 2 27.02.2020թ.

Վանաձոր

2016թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) համագործակցության և կապերի բաժնի (այսուհետ՝ Բաժնի) կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն) սահմանում է Բաժնի գործառույթները, գործունեության ուղղությունները, իրավասությունը, կառավարումը, Բաժնի ստեղծման, վերակազմակերպման և լուծարման կարգը:

1.2. Բաժինը Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումն է և անմիջականորեն ենթարկվում է Համալսարանի գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորին:

1.3. Բաժինը իր գործունեության մեջ առաջնորդվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կրթության և գիտության նախարարության նորմատիվ իրավական ակտերով, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի գիտխորհրդի որոշումներով, ռեկտորի հրամաններով և Կանոնադրությամբ:

1.4. Բաժինը համագործակցում է Համալսարանի այլ ստորաբաժանումների հետ Բաժնի վարիչի կամ Համալսարանի գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորի միջոցով:

2. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. Գործուն արտաքին կապերի ստեղծում Համալսարանի և Լոռու մարզի, Վրաստանի հայկական դպրոցների հետ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության, արտասահմանյան (ԱՊՀ, եվրոպական և այլն) երկրների ուսումնական հաստատությունների հետ,

2.2. Համալսարան-դպրոց կայուն և բազմակողմանի կապերի ապահովում:

3. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Համալսարան-դպրոց կապերի բնագավառում.

3.1.1. ապահովել Համալսարանի մասնագետների ակտիվ մասնակցությունը Լոռու մարզի հանրակրթական դպրոցների ուսումնական և դաստիարակչական գործունեության բնագավառում,

3.1.2. նպաստել Լոռու մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնակցությունը Համալսարանում կազմակերպվող գիտական, ուսումնամեթոդական կոնֆերանսներին, կլոր սեղաններին, սեմինարներին և այլն,

3.1.3. նպաստել Լոռու մարզի լավագույն ուսուցիչների կողմից ցուցադրական դասերի անցկացմանը Համալսարանի ուսանողության համար,

3.1.4. կազմակերպել և անցկացնել առարկայական օլիմպիադաներ Լոռու մարզի դպրոցականների համար,

3.1.5. կազմակերպել նախապատրաստական դասընթացներ և խորհրդատվություններ դիմորդների համար,

3.1.6. կազմակերպել անհատական պարապմունքներ Լոռու մարզի շնորհալի դպրոցականների համար,

3.1.7. կազմակերպել և անցկացնել հեռավար դասեր, դասախոսություններ և խորհրդատվություններ Լոռու մարզի դպրոցականների, Վրաստանի հայկական դպրոցների, Համալսարանի հեռակա բաժնի ուսանողների համար,

3.1.8. անցկացնել արտադասարանային մշակութային, մարզական, բնապահպանական միջոցառումներ՝ Լոռու մարզի դպրոցականների և Համալսարանի ուսանողների մասնակցությամբ:

3.2 Արտաքին կապերի զարգացման և խորացման բնագավառում.

3.2.1. հավաքել, վերլուծել, հիմնավորել և ներկայացնել հանրությանը տարածաշրջանային զարգացման համատեքստում հեռանկարային նշանակություն ունեցող, Համալսարանի կրթական ծրագրերին և գիտահետազոտական աշխատանքներին վերաբերող տեղեկատվական-վերլուծական նյութեր,

3.2.2. մշակել համագործակցության ծրագրեր՝ Համալսարանի և ՀՀ այլ բուհերի, ինչպես նաև արտասահմանյան երկրների բուհերի միջև, համակարգել այդ ծրագրերի շրջանակներում կատարվող աշխատանքները,

3.2.3. աջակցել Համալսարանի մասնակցությանը Հայաստանի Հանրապետությունում գործող արտասահմանյան կազմակերպությունների կողմից հայտարարվող դրամաշնորհային ծրագրերին,

3.2.4. աջակցել Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատակիցների, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների, ինչպես նաև ասպիրանտների ներգրավվածությանը հարավկովկասյան տարածաշրջանային նշանակություն ունեցող գիտահետազոտական, բնապահպանական նախագծերին և դրամաշնորհային ծրագրերին,

3.2.5. աջակցել Համալսարանի և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտների միջև համագործակցության ծրագրերի մշակմանը և աշխատանքների իրականացմանը,

3.2.6. աջակցել Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ինչպես նաև Լոռու մարզի կրթության բնագավառի մասնագետների մասնակցությանը որակավորման բարձրացման գործընթացներին:

4. ԲԱԺՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կազմակերպչական գործունեություն՝ արտաքին կապերի, Համալսարան-դպրոց կապերի զարգացման բնագավառում:

4.2. Վերլուծական գործունեություն՝ Համալսարանի արտաքին կապերի, Համալսարան-դպրոց կապերի արդյունավետությունը որոշելու նպատակով:

4.3. Մեթոդական գործունեություն՝ արտաքին կազմակերպությունների հետ համագործակցության, Համալսարան-դպրոց կապերի զարգացմանն ուղղված տարբեր ծրագրերի մշակում:

4.4. Տեղեկատվական գործունեություն՝ Համալսարանի ռեկտորին, պրոռեկտորներին և ստորաբաժանումների ղեկավարներին իրազեկում ստացված համագործակցության ծրագրերի, նախագծերի, դրամաշնորհների, առաջարկների մասին:

5. ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1. Բաժնի աշխատանքները ղեկավարում է Բաժնի վարիչը, որը նշանակվում է սույն պաշտոնին և ազատվում է պաշտոնից Համալսարանի ռեկտորի հրամանով:

6. ԲԱԺՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Համալսարանի գիտխորհրդի որոշման հիման վրա՝ ռեկտորի հրամանով: